

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՔ  
ԱՄԵՆ  
ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱՆ



ԸՆՏԱՆԵԿԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐ

## ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁ

Սիրելի Եղբայրներ և Զույրեր,

Վերջին Օրերի Սրբերին շատ տարիների ընթացքում խորհուրդ է տրվել նախապատրաստվել ոչ բարենպաստ պայմանների համար` ունենալով տնտեսած մի քիչ փող: Այդ անելն անչափ նպաստում է ապահովությանը և բարօրությանը: Յուրաքանչյուր ընտանիք պատասխանատվություն է կրում հնարավորին չափով ապահովել իր իսկ կարիքները:

Մենք խրախուսում ենք ձեզ` որտեղ էլ որ ապրելիս լինեք աշխարհում, նախապատրաստվել ոչ բարենպաստ պայմանների համար` հոգ տանելով ձեր ֆինանսական պայմանների մասին: Մենք հորդորում ենք ձեզ համեստ լինել ձեր ծախսերում, կարգապահության վարժեցնել ձեր մեջ` ձեր գնումներում պարտքից խուսափելու համար: Վճարեք ձեր պարտքերը որքան կարող եք արագ և ազատեք ձեզ այդ գերությունից: Կանոնավորապես մի քիչ փող խնայեք ֆինանսական խնայություններ ստեղծելու համար:

Եթե վճարել եք ձեր պարտքերը և ունեք խնայված միջոցներ, եթե նույնիսկ դրանք փոքր լինեն, դուք և ձեր ընտանիքն ավելի ապահով կզգաք և ավելի մեծ խաղաղություն կվայելեք ձեր սրտերում:

Թող Աստված օրհնի ձեզ ձեր ընտանիքի ֆինանսական ջանքերում:

Առաջին Նախագահություն



# ԸՆՏԱՆԵԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔՆԵՐԸ

## Վճարեք տասանորդներ և նվիրատվություններ



Ընտանիքի ֆինանսական հաջողությունը սկսվում է տասանորդի ազնիվ վճարումից և ծովի առատ զոհաբերություն տալուց: Տերը խոստացել է բացել երկնքի պատուհանները և դուրս թափել մեծ օրհնություններ նրանց վրա, ովքեր հավատարմորեն տասանորդներ և նվիրատվություններ են վճարում (տես Մադաբիա Գ.10):

## Խուսափեք պարտքից



Ավելի քիչ փող ծախսելը, քան դուք ստանում եք, կարևոր է ձեր ֆինանսական ապահովության համար: Խուսափեք պարտքից, բացառությամբ համեստ մի տուն գնելուց կամ կրթության կամ էլ կենսական կարիքների համար վճարելուց: Խնայեք փող՝ գնելու այն, ինչի կարիք որ ունեք: Եթե պարտքի մեջ եք, վճարեք այն այնքան արագ, որքան հնարավոր է:

## Օգտագործեք բյուջե



Պահեք ձեր ծախսերի վերաբերյալ գրանցումներ: Գրի առեք և վերանայեք ամսեկան եկամուտներն ու ծախսերը: Որոշեք, թե ինչպես կրճատեք ոչ անհրաժեշտ ծախսերը:

Օգտագործեք այս տեղեկությունը ընտանեկան բյուջե հիմնելու համար: Ծրագրեք, թե ինչ պետք է տաք որպես Եկեղեցու նվիրատվություններ, որքան պիտի խնայեք և որքան պիտի ծախսեք ուտելիքի վրա, տան, կենցաղային սպասարկման, տրանսպորտի, հագուստների, ապահովագրության և այլ բաների վրա: Վարժեցրեք ձեզ ապրել ձեր ծրագրած բյուջեի սահմաններում: (Տես «Բյուջեի աշխատանքային թերթիկը» էջի ետևում):

## Ստեղծեք խնայողություններ



Աստիճանաբար ստեղծեք ֆինանսական խնայողություններ և օգտագործեք դրանք միայն հրատապ դեպքերում: Եթե դուք ամեն անգամ կանոնավորապես մի փոքր գումար խնայեք, դուք կգարձանաք, թե որքան շատ կհավաքվի ժամանակի ընթացքում:

## Ուսուցանեք ընտանիքի անդամներին



Ընտանիքի անդամներին սովորեցրեք ֆինանսական կառավարման սկզբունքները: Ներգրավեք նրանց բյուջե ստեղծելիս և ընտանիքի ֆինանսական նպատակներ դնելիս: Ուսուցանեք շատ աշխատելու, չափավորության և խնայողության սկզբունքները: Շեշտեք որքան հնարավոր է շատ կրթություն ստանալու կարևորությունը:

